ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» մայիսի 2015թ. N ---- Ա

ՈՐՈՇՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ Հ. 66 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասը, 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետը, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը, Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի սեպտեմբերի 9-ի հ. 206-Ա որոշումը՝

Երևանի ավագանին որոշում է.

1. «Երևանի հ.66 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության նախաբանը և ընդհանուր դրույթներ գլխի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ Հ. 66 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետի 08.08.2014թ. հ. 3065-Ա և Երևանի ավագանու 09.09.2014թ-ի հ. 206-Ա որոշումներով «Երևանի հ. 66 մանկապարտեզ» և «Երևանի հ.65 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները միացման ձևով վերակազմակերպել են:

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, ավագանին որոշում է ընդունում Երևանի ենթակայության կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման, լուծարման, կանոնադրության կան դրա փոփոխությունների հաստատման, ինչպես նաև այլ կազմակերպություններում Երևանի մասնակցության դադարեցման մասին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ իրավաբանական անձի՝ այլ իրավաբանական անձի միանալու դեպքում միացած իրավաբանական անձի իրավունքները և պարտականություններն անցնում են վերջինիս՝ փոխանցման ակտին համապատասխան: «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածով թվարկված է վերակազմակերպմամբ պայմանավորված պետական գրանցման անհրաժեշտ փաստաթղթերը, ըստ որի, միացման դեպքում՝ այլ փաստաթղթերի հետ մեկտեղ միացման արդյունքում ընդլայնվող կազմակերպությունը պետք է ներկայացնի նաև կանոնադրության փոփոխությունները կամ լրացումները (կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը):

Ելնելով վերոգրյալից անհրաժեշտություն է առաջացել Երևանի ավագանու քննարկմանը ներկայացնել «Երևանի հ.66 մանկապարտեզ« ՀՈԱԿ-ի կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ Հ. 66 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևանի հ.66 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու կապակցությամբ այլ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ Հ. 66 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևանի հ.66 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կակոնադրության մեջ փոփոխություններ կատարելու կապակցությամբ Երևանի 2015թ.-ի բյուջեով նախատեսված եկամուտներում և ծախսերում փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված

Տպագրված է ընդամենը 5 օրինակ

Օրինակ ____

/կազմված է 15.12.2014թ. և բաղկացած՝ 2 էջից/

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«____» _____ 2015թ.

N -Ա ՈՐՈՇՄԱՄԲ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

_____ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԷՐԵԲՈՒՆԻ

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ 19.09.2006թ.

Գրանցման թիվ՝ 278.210.03912

Վկայական՝ 03 Ա 072757

ՀՎՀՀ՝ 00417344

Թիվ ____ փոփոխությունը գրանցված է

Իրավաբանական անձանց պետական

ռեգիստրի կողմից

«____» _____ 2015թ.

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՂԵԿԱՎԱՐ

_____ Կ.ԱԴԱՄՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

/Փոփոխություն/

«Երևանի N 66 մանկապարտեզ»
համայնքային ոչ առևտրային կազմակերպության

ԵՐԵՎԱՆ 2015

«Երևանի հ.66 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Կանոնադրության նախաբանը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Երևանի հ.66 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը հանդիսանում «ԵՐԵՎԱՆԻ ԷՐԵԲՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 86 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության /գրանցված Էրեբունու տ.բ. կողմից, գրանցման համարը 278.210.03912 19.09.2006թ./, «Երևանի հ.66 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության և «Երևանի հ.65 մանկապարտեզ» /գրանցված Էրեբունու տ.բ. կողմից, գրանցման համարը՝ 278.210.03944 19.09.2006թ./ համայնքային ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը:

2. Կանոնադրության «Ընդհանուր դրույթներ» գլխի առաջին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Երևանի քաղաքապետի 08.08.2014թ. հ.3065-Ա և Երևանի ավագանու 09.09.2014թ-ի հ.206-Ա որոշումներով «Երևանի հ.66 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը /գրանցված Էրեբունու տ.բ. կողմից, գրանցման համարը՝ 278.210.03912 23.03.2010թ./ վերակազմակերպվել է՝ նրան միանալով «Երևանի հ.65 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը /գրանցված Էրեբունու տ.բ. կողմից, գրանցման համարը՝ 278.210.03944 19.09.2006թ./ և հանդիսանում է վերջինիս իրավահաջորդը փոխանցման ակտի համաձայն:»:

«Երևանի հ.66 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետ՝ հաստատություն/ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ուսումնական հաստատություն է, որն իրականացնում է նախադպրոցական կրթական ծրագրեր, ապահովում է երեխաների խնամքը, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան ձեռք է բերում և իրականացնում սույն կանոնադրությամբ ամրագրված իր խնդիրների իրականացման համար անհրաժեշտ իրավունքներ և պարտականություններ:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «Երևանի հ.66 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 13.07.2012թ. գրանցված նոր խմբագրությամբ կանոնադրության բաղկացուցիչ մասը: